



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՔՐԵԱԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐՈՒՄ ԵՎ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ
ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ԽՈՒՄԲ

N 21-04
10.02.2021

ՀՀ արդարադատության նախարար՝
պարոն Ռուստամ Բաղասյանին

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հարգելի պարոն Բաղասյան,

ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի անդամները 2021թ. փետրվարի 2-ին այցելություն են կատարել ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿՀ: ՀՀ արդարադատության նախարարի 2020թ. մարտի 20-ի N 126-Ն հրամանով հաստատված ՀՀ ԱՆ քրեակատարողական հիմնարկներում և մարմիններում հասարակական վերահսկողություն իրականացնող հասարակական դիտորդների խմբի ձևավորման և հասարակական վերահսկողության իրականացման կարգի (այսուհետ՝ Կարգ) 62-րդ կետի համաձայն Խմբի անդամներն իրավասու են անարգել այցելել քրեակատարողական հիմնարկներ, տեղում ծանոթանալ տարաբնույթ փաստաթղթերի բովանդակությանը, այդ թվում՝ կալանավորված անձանց կամ դատապարտյալների համաձայնությամբ՝ նրա անձնական գործին և գրագրությանը (բացառությամբ՝ օրենքով պաշտպանվող անձնական տվյալների), պատժի կրման պայմաններին, ինչպես նաև հանդիպել կալանավորված անձանց կամ դատապարտյալներին: **Անհրաժեշտության դեպքում կարող է կատարվել ձայնագրում, լուսանկարում, տեսագրում՝ պահպանելով օրենքով, սույն կարգով կամ Խմբի գործունեության էթիկայի կանոններով նախատեսված դրույթները:**

ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿՀ կատարած այցելության ժամանակ՝ քրեակատարողական հիմնարկի աշխատակիցները խոչընդոտել են Դիտորդների խմբի աշխատանքները, այն է՝ չեն թույլատրել կատարել լուսանկարահանումներ քրեակատարողական հիմնարկի բնակելի կացարաններում և խցերում, չնայած նրան, որ Դիտորդների խմբի անդամները հավաստիացրել են, որ կպահպանեն օրենսդրությամբ և էթիկայի կանոններով նախատեսված դրույթները:

Նշվածից բացի Դիտորդների խմբի անդամները ուսումնասիրել են կարանտինային խցերի պայմանները: Կարանտինային խցերից թիվ 02 խուցը, գտնվում էր բնակության համար անմխիթար վիճակում՝ պատերը բորբոսնած էին, ծեփը՝ թափված:

Վերոգրյալի հիման վրա առաջարկում ենք քայլեր ձեռնարկել Դիտորդների խմբի աշխատանքներին խոչընդոտելը բացառելու ուղղությամբ, ինչպես նաև վերանորոգել ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿՀ-ի թիվ 02 խուցը:

Կից ներկայացնում ենք լուսանկարներ ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿՀ-ի թիվ 02 խցից:

Հարգանքով՝

Խմբի նախագահ

Արայիկ Զայյան